Ալեքսանդր Ծատուրյան

Բանվորուհու օրորը

Մի՛ լար, որդի՛ս, որ չես լսում
էլ մայրական քաղցր օրոր.
Ես մեծ կռվի երգ եմ հյուսում
Օրոցքիդ մոտ ամեն օր:

Դու լսո՞ւմ ես՝ այնտեղ՝ դրսում
Շաչ ու շառա՛չ, լաց ու կո՛ծ,
Մեր արյունն է այնտեղ հոսում՝
Ներկած և՛ տուն, և՛ փողոց...

Այնտեղ գնդեր խառն ու ցրիվ,
Բանվոր գնդեր ահարկու,
Քաջ մղում են մի մեծ կռիվ
Աշխատանքի և ոսկու...

Այնտեղ ոսկին՝ տեր-տիրական
Որպես դահիճ դրժնադեմ,
Սուր է պարզում մեր օրական
Թույնով շաղախ հացի դեմ...

Այնտեղ հայրեր, այնտեղ որդիք
Մի նոր կյանքի եզերքում.
Որպես մի-մի հերոս-մարտիկ

Մահն են գրկում ու երգում...

Այնտեղ է և մեր աչքի լույս,
Մեր օջախի վառ ճրագ՝
Հայրդ կովում, սիրտն ալեհույզ,
Սրտում և՛ թույն և՛ կրակ:

Մի՛ լար, որդի՛ս, որ չես լսում
Էլ մայրական քաղցր օրոր.
Ես մեծ կռվի երգ եմ հյուսում
Օրոցքիդ մոտ ամեն օր...
(1910)